Հետազոտական աշխատանք

ԿԵՆՑԱՂՈՒՄ ՋՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ. 1–2 լիտր տարողությամբ լաբորատոր չափաբաժակ, վարկյանաչափ (կարելի է օգտագործել բջջային հեռախոսի վարկյանաչափը), ծորակից հոսող ջուր կամ դրան փոխարինող փականով տարա:

Հետազոտության ընթացքը. Ծորակի փականը կարգավորում ենք այնպես, որ ջուրը հոսի շատ բարակ շիթով (օրինակ՝ լուցկու հատիկի հաստության) և վարկյանաչափի օգնությամբ հաշվում ենք, թե չափաբաժակում 1 (կամ 2) լիտր ջուրը որքան ժամանակում է լցվում:

Ստացված տվյալների հիման վրա կարելի է մոդելավորել ջրի կորուստը մեկ ժամում, մեկ օրում և համանման: